

ՌՈՒՔԵՆ ՄԱՄՈՒՅԱՆ

(1897-1987)

Ամերիկահայ ռեժիսոր, համարվում է 20-րդ դարի աշխարհի խոշորագույն թատերական և կինոռեժիսորներից մեկը:

«Եթե որևէ արժանիք ունեն, ապա դրա համար պարտական եմ նախ և առաջ ինձ ծնող ազնվական հայ ժողովրդին»

Ամերիկյան կինոն անհնար է պատկերացնել առանց 20-րդ դարի աշխարհի խոշորագույն թատերական և կինոռեժիսորներից մեկի՝ **Ռուբեն Մամուլյանի**:

Ռուբեն Մամուլյանը ծնվել է 1897 թ. Թիֆլիսում՝ Վրաստան, հայ մեծահարուստ բանկիրի ընտանիքում: Սանկոլոթյան տարիներից ի վեր տղան լավ նկարում էր, գրում, հատուկ հետաքրքրություն և ունակություններ էր ցուցաբերում երաժշտության ու լեզուների նկատմամբ: Բանկիր հայրը ցանկացել է, որ որդին ճարտարագետ կամ իրավաբան դառնա: Այնուհանդերձ, տղան ժառանգել էր մոր՝ դերասանուհի Վերժինե Մամուլյանի սերը թատրոնի հանդեպ:

Ուսանել է Մոսկվայի և Լոնդոնի համալսարանների իրավաբանական ֆակուլտետներում: Որոշ ժամանակ հաճախել է Եվգենի Վախթանգովի թատերական ստուդիան: 1920 թվականից Լոնդոնի և Փարիզի, 1923 թվականից Նյու Յորքի թատրոններում իրականացրել է շուրջ 60 դրամատիկական և երաժշտական բեմականացումներ, որոնք մեծ ազդեցություն են թողել ամերիկյան թատրոնի և կինոյի ձևավորման և զարգացման վրա: Մամուլյանի բեմադրություններն առանձնանում են ռեժիսորական հարուստ երևակայությամբ, երաժշտական և դրամատիկական գործողությունների ներդաշնակ լուծումներով ու կերպարների հոգեբանական վերլուծություններով:

1923 թվականից Ռուբեն Մամուլյանը հաստատվում է ԱՄՆ-ում՝ ստեղծելով շուրջ 20 կատակերգական, մելոդրամային, արկածային, երաժշտական ֆիլմեր, որոնք մեծ ներգործություն են թողել ամերիկյան երաժշտական թատրոնի և կինոյի ձևավորման, ինչպես նաև զարգացման վրա: 1920-ականների վերջին Հոլիվուդում տաղանդներ էին



փնտրում, ուստի մասնագետների ուշադրությունը գրավեց Ռուբեն Մամուլյանը՝ իր՝ Բրոդվեյը ցնցած թատերական բեմադրություններով:

Հոլիվուդում նա հայտնվում է 1931 թվականին, որտեղ նույն թվականին ստեղծում է իր առաջին գլուխգործոցը՝ **«Քաղաքի փողոցները»** ֆիլմը: Այս ֆիլմում առաջին անգամ կինոպատմության մեջ գործածվել է արտակադրային ձայնը: Հերոսուհին պատկերված է լուռ, փակ շուրթերով, մինչդեռ նրա հնչող ձայնն արտահայտում է իր մտածումները: Բացի այդ, իր մյուս ֆիլմերում Մամուլյանն իրականացրել է կինոմատոգրաֆիայի պատմության մեջ իր անունը հավերժացնող նորարարություններ. առաջին անգամ օգտագործել է երկու բարձրախոսով ձայնագրումը և մոնտաժը մեկ ձայներիզի վրա, այնուհետև՝ առաջին անգամ նկարահանել է ստուդիայից դուրս, շարժվող տեսախցիկով, նաև՝ օգտագործել միաժամանակ մի քանի խցիկ:

1935 թվականին նկարահանված Մամուլյանի **«Բեքի Շարփը»** առաջին ամբողջովին գունավոր ֆիլմն էր աշխարհում, ավելին՝ այս շարժանկարում վառ գույները ոչ միայն գեղագիտական հաճույք էին պատճառում, այլ ունեին նաև հուզական նշանակություն:

Ռեժիսորական վարպետությունը և հատկապես տաղանդավոր դերասանների հնարավորությունների բացահայտման մղումն առավել արտահայտված են նրա **«Դոկտոր Չեքիլը և միստր Հայդը»** (ըստ Ռոբերտ Լուիս Ստիվենսոնի վեպի, 1932 թ.), **«Միրիթ ինձ այս գիշեր»** (1932 թ., գլխավոր դերում՝ Մորիս Շըվալիե), **«Երգ երգոց»** (1933 թ., գլխավոր դերում՝ Մառլեն Դիտրիխ), **«Քրիստինա թագուհին»** (1934 թ., գլխավոր դերում՝ Գրետա Գարբո), **«Մենք կրկին ապրում ենք»** (1934 թ., ըստ Լև Տոլստոյի «Հարություն» վեպի), **«Ուրախ հրոսակ»** (1936 թ.), **«Ամառային արձակուրդ»** (1948 թ.) և այլ ֆիլմերում:

Մեծ հաջողություն է ունեցել նաև **«Չորրորդի նշանը»** (1940 թ., գլխավոր դերում՝ Թայրոն Փաուեր) արկածային կինոնկարը, որն ամերիկյան կինոյի դասական նմուշներից է:

1935 թվականին բեմադրել է Չորջ Գերշվինի **«Պորգին և Բեսը»** օպերան:

1964 թվականին գրում և հրատարակում է մանկական **Աբիգայլ** գիրքը: Կյանքի վերջին շրջանում ժամանակակից անգլերեն է թարգմանում Շեքսպիրի **Համլետը**:

1968 թվականին այցելել է Հայաստան: Սահացել է 1987 թվականի դեկտեմբերի 4-ին Լոս Անջելեսում:

Նյու Յորք Հերալդ Թրիբյուն» պարբերականը Մամուլյանի մասին գրել է.

«Շատ տրամաբանական է, որ եթե Հոլիվուդում տեղի ունենա գեղարվեստական որևէ հեղափոխություն, այն պիտի ղեկավարի Ռուբեն Մամուլյանը»:

Աղբյուրը՝ <http://henaran.am/149357.html>

Ռուբեն Մամուլյանի մասին հեռուստահաղորդումների համացանցային հղումներ

1. <https://www.youtube.com/watch?v=eyixf2MTnTY> Ռուբեն Մամուլյան
2. <https://www.youtube.com/watch?v=ky07tbgAlc4> Ռուբեն Մամուլյան
3. <https://www.youtube.com/watch?v=PtyckDFsIJA> Կինոսրահ. Ռուբեն Մամուլյան